



ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

14 դեկտեմբերի, 2016 թ.

ք. Երևան

Միջազգային հակակոռուպցիոն օրվան նվիրված ամենամյա մրցանակաբաշխություն «Կառավարություն-ՔՀԿ համագործակցություն» հակակոռուպցիոն համաժողով «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի փակման արարողություն

Միջազգային հակակոռուպցիոն օրվա շրջանակներում 2016 թվականի դեկտեմբերի 9-ին՝ «Բրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ը (ԲՀԱ) և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան Եվրոպական միության ֆինանսավորմամբ և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի համաֆինանսավորմամբ իրականացվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում կազմակերպեցին հակակոռուպցիոն միջոցառում՝ բաղկացած 3 մասից:

Միջոցառման 1-ին մասում տեղի ունեցավ Միջազգային հակակոռուպցիոն օրվան նվիրված ամենամյա հակակոռուպցիոն մրցանակաբաշխությունը: Մրցանակաբաշխությանը ողջույնի խոսքերով հանդես եկան ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Հարությունյանը, Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. Պյոտր Անտոնի Սվիտալսկին, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի Ժողովրդավարացման ծրագրի ղեկավար Դեյվիդ Գուլետը, ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը և ԲՀԱ-ի նախագահ, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող Կարեն Զադոյանը: Կ. Զադոյանը նշեց. «Մենք իրականում ուզում ենք փոխել մեր երկրի անիվը, ուզում ենք ունենալ մրցունակ, իրավական պետություն, որտեղ քաղաքացիները մտածում են ոչ թե առաջին հնարավորության դեպքում երկիրը լքելու, այլ մնալու, բարիք ստեղծելու, զարգացնելու մասին»: Խոսելով այս տարվա կարևոր ձեռքբերումների մասին՝ նա անդրադարձավ ապօրինի հարստացման քրեականացման նախագծին. «Փառք Աստծո, այս ութ տարիների պայքարը այս տարի հանգուցալուծվում է: Չէր հանգուցալուծվի, եթե չլիներ կառավարության կամքը: Նաև մենք մոտ ենք, որ ստեղծենք հակակոռուպցիոն անկախ մարմին. պետք է չվախենանք դանդաղ քայլերուց, որպեսզի երկու տարի հետո չափսոսանք, որ չենք ստեղծել այն մարմինը, որ պետք է մեզ, և չսկսենք զրոյից»: Արթուր Դավթյանը մեծապես կարևորեց քրեական հետապնդում իրականացնող մարմինների գործունեությունը հակակոռուպցիոն պայքարում: Նա նշեց, որ տվյալ հանցագործությունների դեպքում խնդիրներ են առաջանում՝ տեղեկություններ ստանալու և հանցանքի մեջ անձի մեղավորությունը ապացուցելու հետ կապված: Այս երկու փուլերում էլ մեծապես կարիք կա հանրության աջակցության: Դավիթ Հարությունյանը նշեց, որ առաջընթացի համար կարևոր է և՛ խոսքը, և՛ գործը, քանի որ առանց մեկի մյուսն առաջ գնալ չի կարող. խոսքը կարևոր է, որպեսզի հասարակությունը գաղափարներով վարակվի, իսկ գործը պետք է լինի համակարգված: Անդրադառնալով կատարված աշխատանքներին՝ նա նշեց, որ սա ընդամենն այն հենքն է, որի վրա պետք է կառուցվի կոռուպցիայի դեմ հաջող պայքարը: Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. Պյոտր Անտոնի Սվիտալսկին նշեց, որ կոռուպցիայի դեմ պայքարին խոչընդոտող երկու գործոն կա: Մեկն այն է, երբ պետական պաշտոնյաները կարծում են, թե կոռուպցիան խնդիր չէ և արդարացումներ են գտնում, երկրորդը՝ երբ հասարակությունը հավատում է, թե ստեղծված իրավիճակից այլ ելք չկա: Նա ավելացրեց. «Ես ուրախ եմ, որ Հայաստանի նոր կառավարությունը մեծապես կարևորում է հակակոռուպցիոն պայքարը և վարչապետն այսքան հաճախ է խոսում դրա մասին: Երբ նայում եմ կառավարության ծրագրին, այնտեղ տեսնում եմ ամբիջիոզ և հեռու գնացող պլաններ: Ես վստահ եմ, որ իրականացվելու դեպքում այս միջոցառումները փոփոխություն կբերեն, և հույս ունեմ, որ մենք այս տարի կնշենք Հայաստանի համար այդ շրջադարձային պահը և կհիշենք այս օրը՝ որպես նոր գլուխ Հայաստանի և այստեղ մեր ընդհանուր մարտահրավերների համար... Եվրոպական միությունը և պատրաստակամ է՝ աջակցելու այս պայքարին: Ինչպես, հավանաբար, արդեն տեղյակ եք, ԵՄ-ն 15 մլն եվրո է հատկացրել հակակոռուպցիոն պայքարի տարբեր միջոցառումների՝ ինչպես բյուջետային աջակցության, այնպես էլ նախաձեռնություններ ֆինանսավորելու միջոցով, ինչպիսին հենց այսօրվա միջոցառումն է: Եվ մենք պատրաստ ենք շարունակելու մեր աջակցությունը: Ինչպես գիտեք, վերջին տարիները շատ հուսադրող չէին. 2015 թ. մեր հանձնառությունների համար սահմանված նշանոցները չնվաճվեցին: Մեր ցանկությամբ հատկացվելիք միջոցների միայն 50%-ն էր հաստատվել անկողմնակալ գնահատողների կողմից: Սակայն, ես շատ մեծ հույսեր ունեմ, որ այս և հաջորդ տարիները լավը կլինեն: Որքան ավելի շատ միջոցներ է Եվրոպական միությունը հատկացնում Հայաստանին՝ կառավարությանն ու քաղաքացիությանն աջակցելու համար, այնքան ավելի գոհացնող է այս ամբողջ գործընթացն անձամբ ինձ և մեր ամբողջ թիմի համար»:

Մրցանակաբաշխության ընթացքում «Տարվա քաղաքացի» հակակոռուպցիոն մրցանակը տրվեց 21-ամյա Գևորգ Բեգլարյանին, ում տնային պայմաններում ծնվելու պատճառով 20 տարի ձնդակյան չունենալուց հետո հաջողվել էր ստանալ այդ փաստաթուղթը օրինական ճանապարհով՝ առանց կոռուպցիայի մեջ ներքավելու: Մրցանակը նրան հանձնեց ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Հարությունյանը: «Տարվա լրագրող» ճանաչվեց «Առավոտ» օրաթերթի լրագրող Նելլի Գրիգորյանը պետական բյուջեի անարդյունավետ ծախսերի և կոռուպցիոն ռիսկերի մասին պարբերաբար անդրադարձների համար: «Տարվա ՁԼՄ» մրցանակը հանձնվեց «b4b.am» կայքի ղեկավար Բարկեն Թունյանին, որը լուրջ վերլուծություններ էր կատարել հայաստանյան մենաշնորհային ոլորտների վերաբերյալ և ստեղծել նոր «պրո» նախագիծը, որտեղ ներկայացվում են հայաստանյան խոշոր ընկերությունների գործունեության ֆինանսական ցուցանիշները: Մրցանակը նրան շնորհեց Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. Պյոտր Անտոնի Սվիտալսկին:



Օրագիրը
ֆինանսավորվում է
Եվրոպական միության
կողմից:

Հայաստանում
Եվրոպական միության
պատվիրակություն
Հեռախոս՝ +37410 54 64
94
Հեռապատճեն՝ +37410 54
64 95

Եվրասիանախագահը ԵՄ գործադիր մարմինն է:
Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք
որոշել են աստիճանաբար կապակցել իրենց
նոտո-հատու, ռեսուրսներն ու ուղիները: 50
տարվա ընդարձակման ժամանակահատվածում
նրանք միասին ստեղծել են կայունության,
ժողովրդավարության ու կայուն զարգացման
տարածք՝ պահպանելով մշակութային
զանազանությունը, հանդուրժողականությունը և
յուրաքանչյուրի անկախությունը:
Եվրամիությունը հանձնառու է կիսել իր
ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից
այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների
հետ:



ԵԱՀԿ Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ

Օրագիրը համաֆինանսավորվում է ԵԱՀԿ Երևանյան
գրասենյակի կողմից
Հեռախոս՝ +374 10 229610
Հեռապատճեն՝ +374 10 229615

ԵԱՀԿ Երևանյան գրասենյակը գործում է 1999թ.-ից,
որի առաքելությունն է աջակցել Հայաստանին
գարգացնելու իր ժողովրդավարական
հաստատությունները և ամրապնդելու
քաղաքացիական հասարակությունը՝ գործելով
օրենսդրական բարեփոխումների, կոռուպցիայի և
թրաֆիքինգի դեմ պայքարի, բնապահպանական,
մարդու իրավունքների իրազեկման բարձրացման,
լրատվամիջոցների ազատության և այլ ոլորտներում:



Բրավաբանների հայկական
ասոցիացիա
Հասցե՝ Նալբանդյան 7, բն. 2
Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս՝ +37410 54 01 99
Հեռապատճեն՝ +37410 58 02
99



Ինֆորմացիայի
ազատության կենտրոն
Հասցե՝ Բուզանդի 1/3
Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս՝ +37410 56 03 60
Հեռապատճեն՝ +37410 56
03 60

